ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է արտաքին հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները, սահմանում արտաքին հետախուզական գործունեության հիմնական սկզբունքները, արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համակարգը, Արտաքին հետախուզության ծառայության (այսուհետ՝ նաև Ծառայություն) լիազորությունները, կառուցվածքը, կազմավորման, գործունեության, Ծառայությունում ծառայության անցնելու, պաշտոն զբաղեցնելու, Ծառայության ծառայողին պաշտոնից ազատելու, ծառայությունը դադարեցնելու, ծառայությունը կրելու կարգն ու պայմանները, պաշտոնների ու ~~կոչումների~~ դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ինչպես նաև ծառայության հետ կապված այլ առանձնահատկություններ:

Հոդված 4. Արտաքին հետախուզական գործունեության հիմնական սկզբունքները

1. Արտաքին հետախուզական գործունեությունը հիմնված է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու, արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ~~աշխատակիցների~~աշխատողների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնիության, արտաքին հետախուզական գործունեության աղբյուրների անվտանգության անվերապահ ապահովման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության սկզբունքների վրա:

Հոդված 9. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները

1. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝

1) Ծառայությունը.

2) պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի հետախուզության ստորաբաժանումը՝ ռազմական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական և ռազմատնտեսական ոլորտներում.

~~3) Ազգային անվտանգության ծառայության հետախուզության ստորաբաժանումը:~~

2. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Հոդված 10. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք

1. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները կարող են հատուցմամբ կամ անհատույց, պայմանագրով կամ առանց դրա համագործակցային հարաբերություններ հաստատել չափահաս գործունակ անձանց հետ, որոնք համաձայնություն են տվել ցուցաբերելու գաղտնի աջակցություն արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին: Սույն մասում նշված անձանց հետ պայմանագրային կամ առանց դրա համագործակցային հարաբերություններ հաստատելու հիմքերն ու կարգը, պայմանագրի կնքման, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, նրանց կողմից իրականացվող միջոցառումների շրջանակն ու իրականացման կարգը հաստատում է վարչապետը:

2. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն որպես համագործակցող անձ ներգրավելու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, Կառավարության անդամներին, Անվտանգության խորհրդի քարտուղարին, Բարձրագույն դատական խորհրդի անդամներին, Հայաստանի Հանրապետության դատարանների դատավորներին, դատախազներին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, ազգային անվտանգության մարմինների, պետական պահպանության մարմնի, ոստիկանության, զինված ուժերի աշխատողներիաշխատակիցներին, քրեակատարողական ծառայողներին, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացվող արտաքին հետախուզական գործունեության իրականացման նպատակով ներգրավման, ինչպես նաև քննչական մարմինների և այլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների օպերատիվ ստորաբաժանումների աշխատողներիաշխատակիցների:

3. Արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին գաղտնի աջակցություն ցուցաբերող (ցուցաբերած) անձանց և նրանց ընտանիքների անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով կարող են անցկացվել նրանց պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումներ: Սույն մասում նշված միջոցառումների անցկացումը թույլատրվում է արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կողմից՝ համաձայնեցնելով վարչապետի հետ:

(10-րդ հոդվածը լրաց. 15.11.24 ՀՕ-456-Ն)

Հոդված 12. Ծառայության լիազորությունները

1. Ծառայությունը արտաքին հետախուզական գործունեության շրջանակներում՝

1) վարչապետին է տրամադրում արտաքին քաղաքական, անվտանգային, տնտեսական, պաշտպանական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական և շրջակա միջավայրի

պահպանության բնագավառներում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն.

2) բացահայտ կամ գաղտնի մեթոդների, ձևերի ու միջոցների օգտագործմամբ իրականացնում է արտաքին հետախուզական գործունեություն.

3) կամավոր համաձայնություն տված անձանց հետ գաղտնի հիմունքներով հաստատում է համագործակցային հարաբերություններ.

4) իրականացնում է անձնակազմի ծածկագրման և դրա գործունեության կազմակերպմանն ուղղված միջոցառումներ՝ այդ նպատակով այլ մարմինների և կազմակերպությունների հնարավորությունների օգտագործմամբ.

4.1) Ծառայության գործունեության, աշխատողների, աշխատանքի ձևերի, մեթոդների և միջոցների քողարկման նպատակով իրականացնում է միջոցառումներ՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա ընդունված Վարչապետի որոշմամբ սահմանված ընթացակարգին համապատասխան Ծառայությունում պաշտոնի նշանակվելուն հավակնող անձանց այլ պետական մարմիններում կամ կազմակերպություններում (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց մոտ) պաշտոնների նշանակելու նպատակով, եթե տվյալ անձը համապատասխանում է տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջներին.

5) օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

~~6) պատրաստում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց, հաստիքային գաղտնի աշխատողներին և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից ստեղծված կազմակերպությունները, հիմնարկները, շահագործվող շինությունները, հատուկ տեխնիկական և տրանսպորտային միջոցները քողարկող փաստաթղթեր.~~

6) պատրաստում է Ծառայության աշխատողներին, Ծառայության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, ինչպես նաև՝ Ծառայության կողմից ստեղծված կազմակերպությունները, շահագործվող գույքը, հատուկ տեխնիկական և տրանսպորտային միջոցները քողարկող փաստաթղթեր.

7) ներթափանցում է հետախուզական և հատուկ ծառայություններ ու այլ գործունեություն իրականացնող կազմակերպություններ, ինչպես նաև հանցավոր խմբավորումներ, որոնց գործունեությունը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը.

7.1) իրավունք ունի ձերբակալել և համապատասխան մարմիններին հանձնել Ծառայության՝ սեփական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման շրջանակում հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց.

8) հետախուզական տեղեկություններ է հավաքում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման, նրա տնտեսական, ռազմարդյունաբերական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման՝ պետության անվտանգության ամրապնդման նպատակով.

9) ստանում, մշակում և վերլուծում է Հայաստանի Հանրապետության անվտանգության սպառնալիքների մասին տեղեկատվությունը, կանխատեսում վտանգները, իրականացնում է առկա և հնարավոր սպառնալիքների նախականխմանը և կանխմանն ուղղված միջոցառումներ.
10) ռադիոհաճախականությունների բաշխումը և նշանակումը տնօրինող կազմակերպություններից ստանում է ռադիոհաճախականությունների տիրույթներ, ինչպես նաև վարձակալում է Հայաստանի Հանրապետության համապատասխան կազմակերպություններից կապի գծերն ու կապուղիները՝ Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հատուկ կապի այլ տեսակների օգտագործման համար.
11) արտաքին հետախուզական գործունեության համակարգման և արդյունքների վերլուծության ու ամփոփման համար ստեղծում է կապի, տեղեկատվական և տվյալների փոխանցման համակարգեր, տեղեկատվության պաշտպանության միջոցներ (այդ թվում՝ կրիպտոգրաֆիկական պաշտպանության միջոցներ)՝ Ծառայության պետի՝ Ծառայության գործունեությանը վերաբերող օպերատիվ, արխիվային և այլ նյութերի հաշվառման, պահպանման ու օգտագործման սահմանված կարգին համապատասխան.
12) ծառայողական պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ օգտագործում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև կազմակերպություններին ու ֆիզիկական անձանց պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները՝ համարժեք հատուցմամբ.
13) պետական մարմիններ և կազմակերպություններ է ներկայացնում առաջարկություններ կամ միջնորդություններ անվտանգության սպառնալիքների և այն հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման մասին, որոնց բացահայտումը, կանխումը, նախականխումն ու խափանումը վերապահված են դրանց իրավասությանը.
14) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանում է այնպիսի տեղեկություններ (այդ թվում՝ առցանց), որոնք անհրաժեշտ են արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների վրա դրված պարտականությունների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղեկությունների ստացման հատուկ կարգ է սահմանված.
15) արտաքին հետախուզական գործունեություն իրականացնելու համար կարող է ունենալ տեղեկատվական համակարգեր, տվյալների շտեմարաններ, վերլուծության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական նպատակներով տեսագրման, ձայնագրման, կինոնկարահանման, լուսանկարահանման և այլ տեխնիկական միջոցառումների կենտրոններ.

16) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում փոխադարձության հիման վրա համագործակցում է օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների հետ, փոխգործակցության հիման վրա նրանց հետ փոխանակում օպերատիվ տեղեկություններ, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ.

17) Ծառայության աշխատակիցների, ստորաբաժանումների, շինությունների և տրանսպորտային միջոցների քողարկման նպատակով օգտագործում է պետական մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, միջոցները, որոնք անհրաժեշտ են քողարկման համար: Ընդ որում համապատասխան պետական մարմինները և կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը) պատասխանատվություն չեն կրում Ծառայությանը տրամադրված փաստաթղթերի, միջոցների գործածության արդյունքում առաջացած հետևանքների համար. .

17.1) Ծառայության գործունեության, աշխատողների, աշխատանքի ձևերի, մեթոդների քողարկման նպատակով Ծառայությանը հատկացված (ամրացված) կամ Ծառայության կողմից ձեռք բերված և գաղտնի աշխատանքների համար նախատեսված գույքի տնօրինումը և դրանց գործավարությունն իրականացնում է Ծառայության պետի հրամանով սահմանված կարգով և եղանակներով.

18) արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների համաձայնությամբ կարող է օգտագործել վերջիններիս հատկացված (ամրացված) կամ օգտագործման հանձնված շինությունները, հատուկ և այլ տեխնիկական ու տրանսպորտային միջոցներ.

19) իրականացնում է փաստաթղթերի քողարկում Ծառայության և արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների ~~աշխատակիցների~~աշխատողների և կամավոր համաձայնություն տված անձանց գործունեությանն առնչվող, շինությունների, տրանսպորտային միջոցների գերատեսչական պատկանելության վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական տեղեկատվական համակարգերում և (կամ) պետական մարմինների տվյալների շտեմարաններում տեղեկատվության ծածկագրման նպատակով.

20) համագործակցում է արտաքին հետախուզական և հակահետախուզական, ազգային անվտանգության ապահովման բնագավառում գործունեություն իրականացնող այլ իրավասու, ինչպես նաև իրավապահ մարմինների հետ.

20.1) իր գործունեության մասով իրականացնում է հակահետախուզական ապահովում հետևյալ դեպքերում՝

ա. Ծառայության կողմից տնօրինվող պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովման,

բ. Ծառայության դեմ ուղղված օտարերկրյա հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության մասին տեղեկությունների առկայության,

գ. Ծառայության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց ուսումնասիրման (ստուգման) անհրաժեշտության,
դ. Ծառայության ներքին անվտանգության ապահովման դեպքերում.
21) արտաքին հետախուզական գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ կնքում է համապատասխան համաձայնագրեր.
22) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության հաստատություններում առկա արտաքին հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված՝ օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը.
23) համագործակցում է այլ պետությունների հետախուզական և հակահետախուզական ծառայությունների հետ.
24) համատեղ ընդունված իրավական ակտերով սահմանված կարգով համագործակցում է պետական մարմինների հետ արտաքին հետախուզական միջոցառումներ անցկացնելիս.
25) իրականացնում է Ծառայության հատուկ կարևորության, հույժ գաղտնի և այլ ծառայողական թղթակցությունների փոխադրումը, դրանց պահպանումը, ինչպես նաև՝ իր աշխատողներիաշխատակիցների, միջոցների (տեխնիկական, տրանսպորտային, կապի և այլ միջոցներ, տեղեկատվական և այլ համակարգեր, շենքեր ու շինություններ) և տեղեկատվության պաշտպանություն հակաիրավական գործողություններից և սպառնալիքներից՝ Ծառայության պետի սահմանած կարգով.
26) Ծառայության գործունեության նպատակների համար ստեղծում է կազմակերպություններ.
27) ստուգում, հսկողություն, վերահսկողություն և հաշվեքննություն իրականացնող մարմիններին տեղեկատվություն տրամադրում է վարչապետի հանձնարարությամբ, սակայն այդ տեղեկատվությունը չի կարող վերաբերել Ծառայությանն աջակցություն ցուցաբերող և ցուցաբերած անձանց, օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ ներգրավված ուժերին, միջոցներին և հետախուզական գործունեության մեթոդներին.
28) իր գործունեության իրականացման համար կարող է ձեռք բերել, մշակել, ստեղծել և շահագործել տեղեկատվական, տվյալների փոխանցման և կապի համակարգեր, ինչպես նաև տեղեկատվության պաշտպանության և արտահոսքի կանխման հատուկ միջոցներ.

29) իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից անհատույց կերպով ստանալու հասանելիություն իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերին և (կամ) տվյալների շտեմարաններին, այդ թվում՝ հեռակա հասանելիության ռեժիմում: Տեղեկատվական համակարգերի և տվյալների շտեմարանների ցանկը սահմանում է վարչապետը.÷

30) Ծառայության կողմից կապի, տեղեկատվական միջոցների անխափան շահագործման, կիբերպաշտպանության, տեխնիկական հետախուզության միջոցներից պաշտպանության ստանդարտների պահպանության և Ծառայության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով՝ Կառավարության սահմանած կարգով և դեպքերում համաձայնություն կամ եզրակացություն է ներկայացնում Ծառայությանն ամրացված կամ Ծառայության կողմից օգտագործվող անշարժ գույքի (այդ թվում՝ դրանցով ծանրաբեռնված հողամասերի) հարակից տարածքներում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու (այդ թվում՝ կառուցապատման թույլտվության տրամադրումը մերժելու) վերաբերյալ:

2. Ծառայությունն ունի ծառայողների մասնագիտական պատրաստության և որակավորման բարձրացման նպատակով համապատասխան ուսումնական կենտրոն, գիտահետազոտական կազմակերպություններ և արխիվներ, հատուկ հրատարակությունների թողարկում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4.1. կետերի հիման վրա այլ պետական մարմիններում կամ կազմակերպություններում (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց մոտ) պաշտոն զբաղեցնող Ծառայության աշխատողների ստաժը հաշվարկվում է որպես Ծառայության ստաժ և տվյալ աշխատողներն օգտվում են սույն օրենքով Ծառայության ծառայողների համար սահմանված իրավունքներից, պարտականություններից և սոցիալական երաշխիքներից, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունից:

4. Օտարերկրյա պետություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություններ գործուղված ծառայողները արտաքին հետախուզական, սեփական անվտանգության ապահովմանն ուղղված գործառույթներից բացի իրականացում են նաև արտաքին հակահետախուզական գործառույթներ՝ Վարչապետի որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով համագործակցելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ:

-

~~Հոդված 13. Զենքի, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի կիրառումը~~

-

~~1. Ծառայության ծառայողներին թույլատրվում է կրել և պահել հաշվեցուցակային զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժ, այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ, ինչպես նաև զենք ու հատուկ միջոցներ կիրառելու:~~

Հոդված 13. Զենքի, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները

1. Ծառայության ծառայողներին թույլատրվում է կրել և պահել հաշվեցուցակային զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժ, զենք ու հատուկ միջոցներ կիրառելու (գործադրելու), այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու համար և եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

2. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ընտրությունը կատարելիս Ծառայության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:
3. Ծառայության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելուց առաջ պարտավոր է՝
1) նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում իր կամ Ծառայության այլ աշխատողների համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է.
2) դրանք գործադրել (կիրառել) դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ, ձգտել, որպեսի իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.
3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն.
4) ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ և զենք գործադրելու յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:
4. Արգելվում է հատուկ միջոցներ կամ զենք գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձանց կամ անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և Ծառայության աշխատողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:
5. Ծառայության ծառայողները պատասխանատվություն չեն կրում սույն օրենքով նախատեսված դեպքերում գործադրված ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի կիրառման համար, եթե տվյալ դեպքում չի կատարվել անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում:
6. Լիազորությունների գերազանցմամբ ֆիզիկական ուժի գործադրումը, հատուկ միջոցների կամ զենքի գործադրումը (կիրառումը) առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:
7. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին Ծառայության ծառայողը պարտավոր է անհապաղ զեկուցել իր անմիջական ղեկավարին:
8. Ծառայության սպառազինության մեջ ընդգրկված զենքի, ռազմամթերքի և հատուկ միջոցների ցանկը սահմանում է Վարչապետը, իսկ զենքի, ռազմամթերքի և հատուկ միջոցների հաշվառման, հատկացման, կրման և պահելու կարգը սահմանում է Ծառայության պետը:

Հոդված 13.1. Ֆիզիկական ուժի գործադրումը

1. Ծառայության ծառայողներն իրավունք ունեն ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ) գործադրել Ծառայության ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու յուրաքանչյուր դեպքում, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում Ծառայության ծառայողի վրա դրված պարտականությունների կատարումը:

Հոդված 13.2. Հատուկ միջոցների կիրառումը (գործադրումը)

1. Ծառայության ծառայողն իրավունք ունի հատուկ միջոցներ կիրառել հետևյալ դեպքերում՝
1) իր կամ Ծառայության այլ աշխատողների կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց վրա հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կամ ցույց տրվող դիմադրությունը կանխելիս.
2) Ծառայության շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման սպառնալիքին դիմակայելիս.
3) անձանց ձերբակալելիս, որոնց հանդեպ անհրաժեշտ հիմքեր կան ենթադրելու, որ նրանք կարող են ցույց տալ դիմադրություն կամ խոչընդոտել Ծառայության ծառայողների պարտականությունները կատարելուն:

Հոդված 13.3. Զենքի կիրառումը (գործադրումը)

1. Ծառայության ծառայողն իրավունք ունի զենք գործադրել հետևյալ դեպքերում՝
1) իր կամ Ծառայության այլ աշխատողների կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց կյանքին և առողջությանը իրական վտանգ սպառնացող հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս.
2) Ծառայության շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակումը կանխելիս.
3) պատանդներին ազատելիս, ահաբեկչական և այլ հանցավոր ոտնձգություններ կանխելիս.
4) տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդը իրական վտանգ է ստեղծում իր կամ ծառայության այլ աշխատողների կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց կյանքի և առողջության համար և չի ենթարկվում Ծառայության աշխատողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին/հրահանգներին,
5) իր կամ Ծառայության այլ աշխատողի կամ Ծառայության տարածքներում (օբյեկտներում) գտնվող երրորդ անձանց կյանքին կամ առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս,
6) զենք կիրառելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս կամ օգնություն կանչելիս:

Հոդված 15. Ծառայության պետը

1. Ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է Ծառայության պետը (այսուհետ՝ Ծառայության պետ): Ծառայության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչապետին:
2. Ծառայության պետը՝
1) ապահովում է Ծառայության բնականոն գործունեությունը.

2) օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում վարչապետին.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է Ծառայության ~~աշխատակիցներին~~աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ, ներկայացնում է առաջարկություններ Ծառայության աշխատողներին~~աշխատակիցներին~~ պետական պարգևներով պարգևատրելու նպատակով.

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Ծառայության պետին անմիջական հաշվետու անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը և հանձնարարականները.

5) վարչապետին է ներկայացնում Ծառայության գործունեության մասին տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, հաստատում Ծառայության տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում Ծառայությանն ամրացված պետական սեփականության պահպանության ու օգտագործման նկատմամբ.

7) վարչապետի հաստատմանն է ներկայացնում Ծառայության ~~աշխատակիցների~~աշխատողների թիվը, հաստիքացուցակը, կանոնադրությունը, **անվանացանկը,** ինչպես նաև Ծառայության կառուցվածքային փոփոխությունների և վերակազմակերպման վերաբերյալ հարցերը.

8) ձևավորում է աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

9) ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս հանձնարարականներ.

10) ներկայացնում է Ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում.

11) կարող է դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու կազմակերպություններ Ծառայության գործունեության ոլորտին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, գրավոր կամ բանավոր պարզաբանումներ ստանալու նպատակով.

12) սահմանում է Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, իրավասության սահմանները.

12.1) վարչապետի հաստատմանն է ներկայացնում այն պայմանները, որոնց համապատասխանող Ծառայության հետ համագործակցող անձինք Ծառայության պետի հրամանով սահմանված կարգով օգտվում են Ծառայության ծառայողների համար սահմանված սոցիալական երաշխիքներից և որոնց համագործակցության ժամանակահատվածը համարվում է որպես ծառայության ստաժ.

12.2) սահմանում է Ծառայությունում իրականացվող գործավարության կարգը և առանձնահատկությունները.

12.3) սահմանում է Ծառայության կողմից շահագործվող համակարգչային սարքավորումներին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները, շահագործման կարգը և ժամկետները.

12.4) սահմանում է Ծառայության անցագրային ռեժիմը.

12.5) սահմանում է Ծառայության աշխատողների, ստորաբաժանումների, աշխատանքի ձևերի և միջոցների բողարկման եղանակները և կարգը.
13) իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաև օրենքով վարչապետին ենթակա մարմնի ղեկավարին վերապահված այլ լիազորություններ;

Հոդված 16. Ծառայության ծառայողների պաշտոնները

1. Ծառայության ծառայողների պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց՝ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու իրավասության, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Ծառայության ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) ծառայության բարձրագույն պաշտոններ.

2) ծառայության գլխավոր պաշտոններ.

3) ծառայության ավագ պաշտոններ.

4) ծառայության միջին պաշտոններ.

5) ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Ծառայության պաշտոնների բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերը բաժանվում են ենթախմբերի, որտեղ առաջին ենթախումբը համարվում է տվյալ պաշտոնների ամենաբարձր ենթախումբը:

3.1. Ծառայության պետի և Ծառայության պետի տեղակալների պաշտոնները պետական վարչական պաշտոններ են, որոնք չեն ընդգրկվում Ծառայության պաշտոնների անվանացանկում: Ծառայության պետի և Ծառայության պետի տեղակալների պաշտոններ կարող են զբաղեցնել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձինք:

3.2. Սույն օրենքով Ծառայության ծառայողի համար նախատեսված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունը, տարածվում են Ծառայության պետի, նրա տեղակալների, ինչպես նաև Ծառայությունում այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա, իսկ սույն օրենքով սահմանված այլ նորմերը նշված անձանց (այդ թվում՝ Ծառայության պետի և տեղակալի) վրա տարածվում են միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

~~4. Ծառայության կոնկրետ պաշտոններին համապատասխանող կոչումները և դրանց ստորին ու վերին սահմաններն ու շնորհման կարգը սահմանում է վարչապետը:~~

5. Ծառայության հաստիքները կարող են համալրվել նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կողմից, որոնք ծառայողներ չեն, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ,~~:~~, ինչպես նաև նրանց վրա տարածվում են

Ծառայության ծառայողների համար սահմանված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները, բացառությամբ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովության:

Հոդված 17. Ծառայությունում պաշտոնի նշանակմանը ներկայացվող պահանջները

1. Ծառայությունում պաշտոն կարող է զբաղեցնել միայն 18 տարին լրացած, գործունակ՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) տիրապետում է հայերենին.

2) իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու Ծառայության ծառայողի պարտականությունները:

2. Ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են ընդունվել նաև ազգային անվտանգության, պետական պահպանության, զինված ուժերի, ոստիկանության, փրկարար ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներ, դատախազներ, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ նշված մարմիններում և պաշտոններում նախկինում ծառայած կամ աշխատած անձինք), որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար Ծառայության ծառայողներին ներկայացվող պահանջները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական մարմինների և Ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

4. Ծառայությունում ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության, ուսումնասիրման կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող մասնագիտական (այդ թվում՝ օտար լեզվի իմացության), ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված և այլ պահանջները, ինչպես նաև պաշտոնի նշանակման, Ծառայության ծառայողներին ծառայության նոր վայր տեղափոխման, այլ պետական մարմիններ գործուղման, կադրերի ռեզերվում ընդգրկման պայմաններն ու կարգերը սահմանում է վարչապետը:

5. Քաղաքացին Ծառայությունում ծառայության չի կարող անցնել, եթե՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնին նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացումը.

4) դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին.

6) նրա նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

7) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.

8) միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի կամ ունի (ունեցել է) այլ պետությունում կացության կարգավիճակ, բացառությամբ ուսման, բուժման, ընտանեկան հանգամանքների բերումով տրամադրված կացության կարգավիճակի:

6. Ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչև 6 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Ծառայության պետի կողմից սահմանված հրամանով:

(17-րդ հոդվածը լրաց. 15.11.24 ՀՕ-456-Ն)

Հոդված 19. Ծառայության ծառայողներին պաշտոնի նշանակելը

1. Ծառայության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

2. Ծառայության պետի տեղակալներին Ծառայության պետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

~~3. Ծառայության ծառայողների բարձրագույն խմբի՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում չնշված, ինչպես նաև գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնների նշանակում ու պաշտոնից ազատում է Ծառայության պետը:~~

3. Ծառայության ծառայողների բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնների նշանակում ու պաշտոնից ազատում է Ծառայության պետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

~~4. Սույն հոդվածով նախատեսված պաշտոնների նշանակելիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից միաժամանակ կարող է շնորհվել տվյալ պաշտոնին համապատասխան կոչում, եթե տվյալ անձը չունի նախատեսված կոչումից բարձր կոչում:~~

5. Ծառայության դասային աստիճանները սույն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև Ծառայության պետին և Ծառայության պետի տեղակալներին:

~~Հոդված 19.1. Ծառայության ծառայողներին այլ պաշտոնի նշանակումը և փոխադրումը~~

1. Ծառայության ծառայողն իր համաձայնությամբ նշանակվում է բարձր պաշտոնի ծառայության մեջ առաջխաղացման կարգով, եթե՝
1) բավարարում է տվյալ թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները.
2) վերջին մեկ տարվա ընթացքում չի ենթարկվել կարգապահական տույժի:
2. Ծառայողը կարող է նշանակվել այլ հավասարազոր պաշտոնի՝
1) ծառայողական անհրաժեշտությունից ելնելով.
2) կազմակերպչական հաստիքային միջոցառումների կապակցությամբ.
3) ընտանեկան պայմաններից ելնելով.
4) առողջական վիճակով պայմանավորված՝ բժշկական կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն:
3. Այլ հավասարազոր պաշտոնում ծառայողը պաշտոն զբաղեցնում է համաձայնության առկայության դեպքում և եթե բավարարում է տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջները: Ծառայողի համաձայնությունը կարող է չպահանջվել ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ծառայության պետի հրամանով սահմանված դեպքերում:
4. Ծառայողը նշանակվում է ցածր պաշտոնի՝
1) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, եթե հնարավոր չէ նշանակել հավասարազոր պաշտոնի.
2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ իր դիմումի համաձայն, եթե հնարավոր չէ նշանակել հավասարազոր պաշտոնի.
3) առողջական վիճակով պայմանավորված՝ բժշկական կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն, եթե հնարավոր չէ նշանակել հավասարազոր պաշտոնի.
4) իր դիմումի համաձայն,
5) «Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժ ստանալու դեպքում,
6) ատեստավորման կարգով՝ ավելի ցածր պաշտոնի նշանակվելու դեպքում:
5. Կարգապահական տույժ ստանալու հետևանքով ցածր պաշտոնի նշանակված ծառայողը բարձր պաշտոնի կարող է նշանակվել կարգապահական տույժը կրելու ժամկետը լրացած լինելու կամ կարգապահական տույժը հանված լինելու դեպքում:
6. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ ծառայողը կարող է փոխադրվել հավասարազոր կամ բարձր պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող հետևյալ դեպքերում՝
1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող ծառայողի պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնելու դեպքում,
2) մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում,
3) պարտադիր զինծառայության զորակոչվելու դեպքում.
4) ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում:
7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքերը վերանալու դեպքում ծառայողը փոխադրվում է իր նախկին պաշտոնին:
8. Ծառայողին պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարման փոխադրում և ժամանակավոր կատարումից ազատում է Ծառայության պետը:
9. Սույն հոդվածով սահմանված այլ պաշտոնի նշանակման կամ փոխադրման դեպքերում Ծառայողի հետ վերջնահաշվարկ չի իրականացվում, իսկ այլ պաշտոնի ժամանակավոր փոխադրման դեպքում դասային աստիճանի փոփոխություն տեղի չի

ունենում:
10. Ծառայության ծառայողին բարձր կամ հավասարազոր կամ ցածր պաշտոնի նշանակելու կամ այլ պաշտոնի փոխադրելու կարգը սահմանվում է Ծառայության պետի հրամանով:

Հոդված 20. Ծառայության ծառայողների ատեստավորումը և վերապատրաստումը

1. Ծառայության ծառայողների ~~ընտրության,~~ մասնագիտական ունակությունների գնահատման, զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և առաջխաղացման հեռանկարը որոշելու նպատակով անցկացվում է ատեստավորում, որի կարգն ու պայմանները սահմանում է վարչապետը:

2. Ատեստավորում անցկացնելու համար Ծառայության պետի հրամանով ստեղծվում է (են) ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

~~3. Արտաքին հետախուզական խնդիրների իրականացման, պլանավորման և վերահսկման, ինչպես նաև հետախուզական տեղեկատվության վերլուծության, օպերատիվ-հետախուզական և հատուկ գործողությունների իրականացման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող Ծառայության ծառայողների հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվող ատեստավորման կարգը և արտաքին հետախուզական խնդիրների իրականացման, պլանավորման և վերահսկման, ինչպես նաև հետախուզական տեղեկատվության վերլուծության, օպերատիվ-հետախուզական և հատուկ գործողությունների իրականացման գործառույթների շրջանակը սահմանում է վարչապետը:~~

3. Արտաքին հետախուզական խնդիրների իրականացման, պլանավորման և վերահսկման, ինչպես նաև հետախուզական տեղեկատվության վերլուծության, օպերատիվ-հետախուզական և հատուկ գործողությունների իրականացման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող Ծառայության ծառայողների հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվող ատեստավորման կարգը և արտաքին հետախուզական խնդիրների իրականացման, պլանավորման և վերահսկման, ինչպես նաև հետախուզական տեղեկատվության վերլուծության, օպերատիվ-հետախուզական և հատուկ գործողություններ իրականացնող ստորաբաժանումների ցանկը սահմանում է վարչապետը:

4. Մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման նպատակով Ծառայության ծառայողները վարչապետի որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում են վերապատրաստումների:

Հոդված 21. Ծառայության ծառայողների կադրերի ռեզերվը

~~1. Ծառայության ծառայողները գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, Ծառայության կամ դրա ստորաբաժանումների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե Ծառայության ծառայողին հավասարազոր~~

~~պաշտոնի նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:~~

1. Ծառայության ծառայողները, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, Ծառայության վերակազմակերպման կամ Ծառայության կառուցվածքային փոփոխության դեպքերում, եթե Ծառայության ծառայողին հավասարազոր պաշտոնի նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնները Ծառայության ծառայողին առաջարկվում են ըստ հերթականության:

3. Ծառայության ծառայողների՝ կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան սույն օրենքով սահմանված՝ Ծառայությունում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքի լրանալը, իսկ ծառայության ժամկետը սույն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև երկարաձգված ժամկետի լրանալը:

~~4. Եթե Ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձը, իր դիմումի համաձայն, հանվում է ռեզերվից, ապա նրա ստաժը հաշվարկվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակահատվածին համապատասխան:~~

4. Ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է Ծառայությունում ծառայության ստաժ:

5. Ծառայության ծառայողներին կադրերի ռեզերվում գտնվելու առաջին երեք ամիսների համար վճարվում է նրանց զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Ծառայության ծառայողի դիմումի հիման վրա ~~երկու ամսից շուտ~~ կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վճարումն իրականացվում է կադրերի ռեզերվում գտնվելու փաստացի ժամանակահատվածին համապատասխան:

6. Սույն օրենքի հիման վրա Ծառայության ծառայողներին կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատում է վարչապետը:

Հոդված 22. Ծառայության ուսումնական կենտրոնը

1. Ծառայության համակարգում գործում է ուսումնական կենտրոն:

2. Ծառայության ուսումնական կենտրոնի գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

~~3. Ուսումնական կենտրոն ընդունելության, ուսումնական կենտրոն ընդունվելիս համապատասխան պայմանագիր կնքելու, ուսումնական կենտրոնն ավարտելուց հետո հետագա ծառայության նվազագույն ժամկետի և ժամկետից շուտ ծառայությունն~~

~~ավարտելու (այդ թվում՝ ուսման ծախսերի փոխհատուցման) հետ կապված հարցերը կարգավորվում են վարչապետի սահմանած կարգով:~~

3. Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում Ծառայության ծառայողների պատրաստման, վերապատրաստման կամ այլ մասնագիտացված դասընթացների և կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան պայմանագիր կնքելու, պատրաստումը կամ վերապատրաստումը կամ մասնագիտացված դասընթացները և կրթական ծրագրերը ավարտելուց հետո հետագա ծառայության նվազագույն ժամկետի և ժամկետից շուտ ծառայությունն ավարտելու դեպքում Ծառայության ծառայողի կողմից պետական բյուջեի միջոցներից կատարված ծախսերի փոխհատուցման կարգը, դեպքերը և առանձնահատկությունները կարգավորվում են վարչապետի որոշմամբ սահմանված կարգով:

4. Ուսումնական կենտրոնը, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) Ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով վերապատրաստումը).

2) Ծառայության պաշտոններ զբաղեցնելու նպատակով Ծառայության ծառայողների պատրաստումը.

3) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

5. Ուսումնական կենտրոնը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

~~Գ Լ ՈՒ Խ 8~~

~~ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ~~

~~Հոդված 23. Ծառայության ծառայողների կոչումները~~

~~1. Ծառայության ծառայողների համար սահմանվում են հետևյալ կոչումները.~~

~~1) արտաքին հետախուզության ծառայության գեներալ գնդապետ.~~

~~2) արտաքին հետախուզության ծառայության գեներալ լեյտենանտ.~~

~~3) արտաքին հետախուզության ծառայության գեներալ մայոր.~~

~~4) արտաքին հետախուզության ծառայության գնդապետ.~~

~~5) արտաքին հետախուզության ծառայության փոխգնդապետ.~~

~~6) արտաքին հետախուզության ծառայության մայոր.~~

~~7) արտաքին հետախուզության ծառայության կապիտան.~~

~~8) արտաքին հետախուզության ծառայության ավագ լեյտենանտ.~~

~~9) արտաքին հետախուզության ծառայության լեյտենանտ.~~

~~10) արտաքին հետախուզության ծառայության ավագ ենթասպա.~~

~~11) արտաքին հետախուզության ծառայության ենթասպա:~~

~~2. Ծառայության ծառայողներին կոչումներ շնորհելու ընդհանուր պայմանները, այդ թվում՝ հերթական կոչում շնորհելու, կոչումն իջեցնելու և վերականգնելու և դրանց հետ կապված այլ հարաբերություններ սահմանում է վարչապետը:~~

ԳԼՈՒԽ 8
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 23. Ծառայության դասային աստիճանները

1. Ծառայությունում սահմանվում են հետևյալ դասային աստիճանները.
1) Արտաքին հետախուզության առաջին դասի հետախույզ.
2) Արտաքին հետախուզության երկրորդ դասի հետախույզ.
3)Արտաքին հետախուզության երրորդ դասի հետախույզ.
4) Արտաքին հետախուզության չորրորդ դասի հետախույզ.
5) Արտաքին հետախուզության հինգերորդ դասի հետախույզ.
6) Արտաքին հետախուզության վեցերորդ դասի հետախույզ.
7) Արտաքին հետախուզության յոթերորդ դասի հետախույզ.
8) Արտաքին հետախուզության ութերորդ դասի հետախույզ.
9) Արտաքին հետախուզության իններորդ դասի հետախույզ.

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում նշված դասային աստիճանները հանդիսանում են բարձրագույն դասային աստիճաններ, որոնք շնորհվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:
3. Ծառայության գաղտնի հաստիքային ծառայողներին բարձրագույն դասային աստիճան շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում տվյալ հրամանագիրը ծառայողին տեղեկացնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն հոդվածի 1-ին մասի 4-9-րդ կետերում նշված դասային աստիճանները շնորհում է Ծառայության պետը:
5. Ծառայության դասային աստիճանները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:
6. Ծառայությունում ժամանակավոր թափուր և թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց համար չեն սահմանվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դասային աստիճանները:
7. Ծառայության ծառայողները ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում կարող են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով զրկվել դասային աստիճանից:

Հոդված 23.1 Ծառայության պաշտոններին համապատասխանող դասային աստիճանները

1. Ծառայության պետի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն Արտաքին հետախուզության առաջին դասի հետախույզի դասային

աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ Արտաքին հետախուզության երրորդ դասի հետախույզի դասային աստիճանը:
2. Ծառայության պետի տեղակալի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն Արտաքին հետախուզության երկրորդ դասի հետախույզի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը Արտաքին հետախուզության չորրորդ դասի հետախույզի դասային աստիճանը:
3. Ծառայության ծառայողների բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր պաշտոններին համապատասխանող դասային աստիճանների վերին և ստորին սահմանները, դրանց շնորհման կարգը սահմանում է Ծառայության պետը:
4. Պետական այլ մարմիններում հանրային ծառայության անցած (աշխատած) և զինվորական կամ այլ հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող անձանց Ծառայությունում պաշտոնի նշանակվելիս շնորհվում է նրանց ունեցած զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին համապատասխան դասային աստիճան: Զինվորական կամ այլ հատուկ կոչումների կամ այլ դասային աստիճանների համապատասխանությունը սույն օրենքով սահմանված դասային աստիճաններին սահմանում է ՀՀ կառավարությունը:

Հոդված 23.2 Դասային աստիճանների շնորհումը և դրանց շնորհման ժամկետները

1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա Ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի հիման վրա փորձաշրջան նշանակված լինելու դեպքում՝ փորձաշրջանը հաղթահարելուց հետո Ծառայողին շնորհվում է տվյալ պաշտոնին համապատասխանող դասային աստիճան՝ սույն օրենքով սահմանված կարգով:
2. Եթե սույն օրենքի 23.1 հոդվածի 4-րդ մասով սահմանված համապատասխան կոչման կամ դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում այն ավելի բարձր է Ծառայությունում համապատասխան պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանից, ապա շնորհվում է տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան՝ սույն օրենքով սահմանված կարգով:
3. Ծառայության ծառայողներին դասային աստիճանները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանի սահմաններում, նախորդ դասային աստիճանում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված նախատեսված դեպքի:
4. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական դասային աստիճանի շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.
1) Արտաքին հետախուզության իններորդ դասի հետախույզ՝ 1 տարի.
2) Արտաքին հետախուզության ութերորդ դասի հետախույզ՝ 2 տարի,
3) Արտաքին հետախուզության յոթերորդ դասի հետախույզ՝ 3 տարի.
4) Արտաքին հետախուզության վեցերորդ դասի հետախույզ՝ 3 տարի,
5) Արտաքին հետախուզության հինգերորդ դասի հետախույզ՝ 4 տարի,
5. Արտաքին հետախուզության չորրորդ դասի հետախույզի դասային աստիճան ունեցողի համար բարձրագույն դասային աստիճանի շնորհման համար պաշտոնավարման ժամկետ չի սահմանվում:

6. Տվյալ դասային աստիճանով ծառայության ժամկետը հաշվարկվում է դասային աստիճանը շնորհելու օրվանից, իսկ սույն օրենքի 23.1 հոդվածի 4-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում՝ զինվորական կամ այլ հատուկ կոչման կամ այլ դասային աստիճանի շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդող օրվանից:

7. Ծառայության ծառայողի հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) Ծառայության ծառայողը ենթարկվել է կարգապահական տույժի և այն դեռևս մարված չէ կամ սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերի հիման վրա նշանակված կարգապահական տույժի նշանական օրվանից չի անցել 1 տարի.

2) Ծառայողի լիազորություններն օրենքով սահմանված կարգով կասեցվել են, կամ կատարվում է ծառայողական քննություն,

3) Ծառայողի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,

4) ատեստավորումը չհաղթահարելու դեպքում,

5) վերապատրաստման ընթացքում:

8. Ծառայողին դասային աստիճան շնորհվում է սույն հոդվածի 7-րդ մասի 1-2-րդ կետերով նշված հիմքերը վերանալուց, ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցվելուց, ատեստավորումը հաղթահարելուց և վերապատրաստման ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը Ծառայության ծառայողների դասային աստիճան կրելու ժամկետում չի հաշվարկվում: Նշված ժամկետի հաշվարկը վերսկսվում է ծառայողների կողմից ծառայության անցնելուց հետո:»:

-

~~Հոդված 26. Ծառայության ծառայողի համազգեստը և ծառայողական վկայականը~~

-

~~1. Ծառայության ծառայողների համար սահմանվում է համազգեստ, որի ձևը և կրելու կարգը սահմանում է վարչապետը:~~

~~2. Ծառայության ծառայողին տրվում է ծառայողական վկայական, որի ձևը, տրամադրելու, ոչնչացնելու, անվավեր ճանաչելու և կրելու կարգը հաստատում է Ծառայության պետը:~~

« Հոդված 26. Ծառայության ծառայողի համազգեստը և ծառայողական վկայականը

-

1. Ծառայության ծառայողների համար սահմանվում է համազգեստ, որի ձևը և կրելու կարգը սահմանում է վարչապետը, իսկ համազգեստ կրելու պարտականություն ունեցող ծառայողների շրջանակը և դեպքերը սահմանում է Ծառայության պետը:

2. Ծառայությունում հանրային պաշտոն (բացառությամբ՝ վարչական պաշտոնների) և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է ծառայողական վկայական, որի ձևը, տրամադրելու, ոչնչացնելու, անվավեր ճանաչելու և կրելու կարգը հաստատում է Ծառայության պետը:»:

Հոդված 31. Ծառայության ծառայողի արձակուրդի տեսակները

1. Ծառայության ծառայողին վարձատրության պահպանմամբ տրվում են՝
1) ամենամյա նվազագույն արձակուրդ.
2) ամենամյա լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդ.
3) ուսումնական արձակուրդ.
4) հիվանդության պատճառով արձակուրդ.
5) հղիության և ծննդաբերության արձակուրդ.
6) հայրության արձակուրդ:
2. Ծառայության ~~կին~~ ծառայողներին տրվում է նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդ:
3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-6~~5~~-րդ կետերում և 2-րդ մասում նշված արձակուրդները ծառայողի ամենամյա նվազագույն և ամենամյա լրացուցիչ արձակուրդում չեն հաշվվում:
4. Ծառայության ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանում է վարչապետը:

Հոդված 32. Ծառայության ծառայողների արձակուրդը

1. Ծառայության ծառայողն ունի ամենամյա նվազագույն և ամենամյա լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդի իրավունք:
2. Ծառայության ծառայողի ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր է, իսկ ամենամյա լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդի տևողությունը՝ չորս աշխատանքային օր:
2.1. Ծառայության ծառայողներին, ըստ ծառայության ստաժի, տրվում է լրացուցիչ արձակուրդ՝
1) 15-ից մինչև 25 տարի օրացուցային հաշվարկով ծառայածներին՝ 10 աշխատանքային օր.
2) 25 և ավելի տարի օրացուցային հաշվարկով ծառայածներին՝ 15 աշխատանքային օր:
Ընդ որում սույն հոդվածի 2-րդ մասում նշված լրացուցիչ չորս աշխատանքային օրը սույն կետում նշված լրացուցիչ արձակուրդի օրերի մեջ չի հաշվարկվում:

3. Ծառայության ծառայողին ամենամյա նվազագույն և (կամ) ամենամյա լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդը տրամադրվում է այնպես, որ այն չխոչընդոտի տվյալ կառուցվածքային ստորաբաժանման բնականոն գործունեությունը:

3.1. Երեխայի ծնվելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, տղամարդ ծառայողի (նորածնի հոր) ցանկությամբ տրամադրվում է հինգ աշխատանքային օր տևողությամբ վճարովի արձակուրդ:

4. Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, Ծառայության ծառայողին կարող է մեկ աշխատանքային տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ ոչ ավելի, քան երեսուն օր:

Հոդված 33. Ծառայության ծառայողների խրախուսումը

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և (կամ) սահմանված կարգով տրված հանձնարարականներն ու առաջադրանքները գերազանց կատարելու համար Ծառայության ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում.

5) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում.

6) զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն ~~կոչումից~~դասային աստիճանից մեկ աստիճան բարձր ~~կոչման~~դասային աստիճանի շնորհում,

7) կարգապահական տույժի հանում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված խրախուսանքի տեսակը Ծառայության ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ:

2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված խրախուսանքի տեսակը կարող է կիրառվել մինչև հերթական դասային աստիճանի շնորհման ժամկետի լրանալը:

3. Ծառայության ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

4. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար Ծառայության ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4.1. Երկարամյա ծառայության կամ ծառայողական պարտականությունները կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար Ծառայությունում հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կարող են շնորհվել դասային աստիճաններ, ներառյալ նաև՝ բարձրագույն:

5. Ծառայությունը թողարկում է գերատեսչական մեդալներ և կրծքանշաններ, որոնց տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է Ծառայության պետը:

Հոդված 34. Ծառայության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պայմանները և կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ ծառայողական լիազորությունները վերազանցելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու դեպքում Ծառայության ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Ծառայության ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) ~~կոչման~~ դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) ծառայության դադարեցում:

3. Ծառայության ծառայողի նկատմամբ ~~կոչման~~ դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով կարգապահական տույժը ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ՝ ~~կոչումը~~ դասային աստիճանը շնորհած պաշտոնատար անձի կողմից:

4. Ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

Հոդված 35. Ծառայության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե մեկ տարուց ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները: Ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին Ծառայության ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Ծառայության ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

4.1. Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

5. Ծառայության ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

6. Ծառայողական քննության ժամանակահատվածում Ծառայության ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես կասեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ, պաշտոնում մնալով, նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացումը: Այդ դեպքում Ծառայության ծառայողի վարձատրությունը պահպանվում է:

7. Ծառայության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում նրա պաշտոնավարումը կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

8. Կարգապահական տույժի ենթարկված Ծառայության ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

Հոդված 37. Ծառայության ծառայողներին պաշտոնից ազատելը

1. Ծառայության ծառայողներն զբաղեցրած պաշտոնից ազատվում են՝

~~1) հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքերում Ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս.~~

1) հաստիքների կրճատման, Ծառայության վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության դեպքերում Ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս.

- 1.1) սույն օրենքի 19.1 հոդվածի հիման վրա այլ պաշտոնի նշանակվելու դեպքերում.

~~2) հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքերում, եթե ծառայողին համապատասխան պաշտոնի նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է Ծառայության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.~~

2) հաստիքների կրճատման, Ծառայության վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության դեպքերում, եթե ծառայողին համապատասխան պաշտոնի նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է Ծառայության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

2.1) Ծառայության գործունեությունը դադարեցվելու,

3) ատեստավորման արդյունքների հիման վրա այլ պաշտոնի նշանակվելիս.

4) իրենց դիմումի համաձայն.

5) ծառայությունը դադարեցվելու դեպքում.

6) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում:

2. Ծառայողին պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

~~Հոդված 41. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանությունը և սոցիալական երաշխիքները~~

~~1. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանությունը երաշխավորում է պետությունը:~~

~~2. Ծառայության ծառայողները և նրանց ընտանիքների անդամները պետության պաշտպանության ներքո են: Ծառայության ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Ծառայության ծառայողն անվտանգությունն ապահովելու նպատակով իրավունք ունի դիմելու Ծառայության պետին:~~

~~3. Սույն հոդվածում նշված անձանց սոցիալական երաշխիքների տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է վարչապետը:~~

Հոդված 41. Ծառայության աշխատողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանությունը

1. Ծառայության աշխատողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանությունը երաշխավորում է պետությունը:

2. Ծառայության աշխատողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Ծառայությունը աշխատողի դիմումի հիման վրա կամ Ծառայության կողմից գնահատված ռիսկերի առկայության դեպքում Ծառայությունն ապահովում է աշխատողի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունը:

3. Ծառայողական պարտականությունները կատարելիս ձերբակալված Ծառայության աշխատողին խուզարկելը, անձի, իրերի, անձնական և ծառայողական օգտագործման տրանսպորտային միջոցների զննությունը կատարվում է Ծառայության պաշտոնական ներկայացուցչի ներկայությամբ: Ընդ որում, տվյալ դեպքում իրականացվող անձնական խուզարկության կամ իրականացվող զննության արդյունքում հայտնաբերված և Ծառայությանը պատկանող տեղեկակիրները կամ տեխնիկական և այլ միջոցները ենթակա չեն առգրավման ձերբակալումն իրականցրած կամ վարույթն իրականացնող մարմնի կողմից և փոխանցվում են Ծառայության պաշտոնական ներկայացուցչին:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված անձանց պաշտպանության տրամադրման շրջանակը, կարգը և պայմանները սահմանվում են Ծառայության պետի հրամանով:

Հոդված 41.1 Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները

1. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար սահմանվում են հետևյալ սոցիալական երաշխիքները.

1) Ծառայողին և նրա ընտանիքի անդամներին բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվելու համար Վարչապետի որոշմամբ սահմանված չափով և կարգով փոխհատուցման տրամադրումը.

2) Ծառայողին կամ նրա ընտանիքի անդամին պատճառված գույքային վնասի հատուցումը՝ պայմանավորված ծառայողական պարտականությունների կատարմամբ.

3) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի հիման վրա կենսաթոշակի անցնելու կամ Ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալու կամ աշխատողի հետ կնքված պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապակցությամբ Ծառայությունից ազատվելիս ծառայողներին ըստ ծառայության տարիների վճարվում է հետևյալ չափով միանվագ նպաստ.

ա. 5 տարուց մինչև 10 տարի ծառայության համար՝ պաշտոնային դրույքաչափի չափով .

բ. 10 տարուց մինչև 20 տարի ծառայության համար՝ օրենքի հիման վրա ծառայողին հատկացվող հավելման և պաշտոնային դրույքաչափի հանրագումարի չափով.

գ. 20 և ավելի տարի ծառայության համար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

5) Օտարերկրյա պետությունում ծառայողի ծառայողական պարտականությունների կատարման բերումով Ծառայության ծառայողին կամ ծառայողի ընտանիքի անդամներին պատճառված նյութական վնասը (իրական վնասը և բաց թողնված օգուտը) լիովին փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցներից՝ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով և դեպքերում: Ծառայության ծառայողն իրավունք ունեն սույն կետով նախատեսված վնասի հատուցում պահանջել վնասի առաջացման օրվանից մեկ տարվա ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ընտանիքի անդամ են համարվում՝

1) ծառայողի ծնողները, ամուսինը, զավակը.

2) ծառայողի հետ համատեղ բնակվող 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը կամ եղբայրը, եթե հաշմանդամություն ունեցող անձ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են ծառայողի խնամքի տակ գտնվող, եթե օրենքով սահմանված կարգով սահմանվել է

խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:
3. Ծառայության ծառայողների կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Ծառայության ծառայողներին տրվող դրամական օգնության և սոցիալական երաշխիքների տրամադրման հետ կապված և սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 42. Ծառայության ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ծառայության ծառայողն իրավունք չունի՝

~~1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև՝ Ծառայության պետի հրամանով սահմանված դեպքերում և պայմաններով (այդ թվում՝ վարձատրության առանձնահատկությունները սահմանող) կատարվող աշխատանքից, որոնք բխում են Ծառայության առջև դրված խնդիրների կատարումից.

2) լինելու Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնելու ընտրովի կամ այլ պաշտոններ.

~~3) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

3) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, բացառությամբ Ծառայության պետի հրամանով սահմանված այն դեպքերում և պայմաններով, որոնք բխում են Ծառայության առջև դրված խնդիրների կատարումից.

4) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու Ծառայության նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8) լինելու որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ, ստեղծելու կուսակցություններ, մասնակցելու հավաքների.

9) պաշտոնական դիրքն օգտագործելու ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության.

10) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցելու դրանց:

2. Ծառայությունում ծառայության անցնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Ծառայության ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքի: Ծառայության ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:

3. Արգելվում է համատեղ ծառայել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ և պապ) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ անմիջական վերահսկողության հետ:

4. Ծառայության ծառայողին չի տրվում պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի տեղափոխման, ազատման, ծառայությունը դադարեցնելու կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն:

~~5. Ծառայության ծառայողներին պետական և ծառայողական գաղտնիքներին առնչվելու թույլտվություն տրվում է «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով:~~

5. Ծառայության աշխատողներին պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն տրվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Ծառայության ծառայողը կարող է սովորել իր մասնագիտությանը մոտ կամ բնույթով իր կատարած աշխատանքի գծով մասնագիտական գիտելիքների խորացմանը նպաստող հեռակա ուսումնական հաստատություններում՝ միայն Ծառայության պետի թույլտվությամբ: